

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2015 թվականի մարտի N

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165 - Ն որոշման 4-րդ կետը՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման և ռոտացիայի կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման համար հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) տասնհինգօրյա ժամկետում ապահովել խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացումը,

2) շահագրգիռ միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ քննարկել Խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման համար ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կազմում այդ կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկման հարցը և անհրաժեշտության դեպքում վերը նշված հանձնաժողովում ընդգրկել համապատասխան ներկայացուցիչների:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Հ. Աբրահամյան

Հավելված N 1

**ՀՀ վարչապետի 2015 թվականի
հոկտեմբերի -----ի N ----- որոշման**

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման և ռոտացիայի (այսուհետ՝ ներգրավում) հետ կապված հարաբերությունները:
2. Խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ):

II. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման համար Աշխատակազմը մրցույթից առնվազն 10 օր առաջ հրապարակում է հայտարարություն: Հայտարարությունը հրապարակվում է առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով,

ինչպես նաև աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի պաշտոնական www.moj.am կայքում:

4. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները:
 - 1) հայտերի ներկայացման վայրը, հասցեն և հայտեր ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը.
 - 2) հայտերի ընդունման օրերը և ժամերը.
 - 3) հայտեր ներկայացնող հասարակական կազմակերպությանը ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
 - 4) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

5. Հասարակական կազմակերպությունները հայտերը ներկայացնում են աշխատակազմ հայտարարությունից հետո 10 օրյա ժամկետում համաձայն սույն որոշմամբ հաստատվող ձևի:

6. Հայտ կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպությունները, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին:

7. Հասարակական կազմակերպությունը հայտին կից ներկայացնում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք փաստում են Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 19-ի N 165-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետով սահմանված պահանջներին (չափանիշներ) հասարակական կազմակերպության համապատասխանության վերաբերյալ:

8. Հասարակական կազմակերպությունը հայտում նշում է այն լիազոր ներկայացուցչին, ով պետք է ներկայացնի կազմակերպությունը Խորհրդում, և ներկայացնում է իր ներկայացուցչի վերաբերյալ տվյալները (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե):

9. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) կարող են հանձնվել առձեռն կամ ուղարկվել փոստով:
10. Փաստաթղթերն ընդունելու նպատակով աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան:
11. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե աշխատակազմը դրանք ստացել է մինչև սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետի լրանալը:
12. Փոստով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերը ստանալուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:
13. Փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հայտ ներկայացնողն այդ մասին ծանուցվում է մեկ օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր), և նրան տրամադրվում է երկու աշխատանքային օր այն լրացնելու համար:
14. 13-րդ կետով սահմանված ժամկետում հայտը չլրացնելու դեպքում հասարակական կազմակերպության ներկայացրած հայտը վերադարձվում է հիմնավորմամբ: Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը որոշում է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը, որը պետք է բաղկացած լինի առնվազն 5 անդամից:

IV. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

15. Մրցույթն անցկացվում փուլերով: Առաջին փուլում հանձնաժողովը ստուգում է փաստաթղթերի լրիվությունը և համապատասխանությունը և կազմում համապատասխան արձանագրություն: Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են երկուսից ավելի հասարակական կազմակերպություններ, ապա հայտ ներկայացված կազմակերպությունների մասնակցությամբ անցկացվում է

2-րդ փուլը՝ վիճակահանությունը: Հայտ ներկայացված կազմակերպությունները վիճակահանության օրվա և ժամի մասին ծանուցվում են առնվազն մեկ օր առաջ:

16. Վիճակահանությունն անցկացնում է սույն կարգի 14-րդ կետում նշված հանձնաժողովը:

17. Վիճակահանությունն անցկացվում է դրա համար նախատեսված համապատասխան թափանցիկ տարրայի կիրառմամբ, որի մեջ պետք է լինեն մասնակիցների թվաքանակին համապատասխան քառակուսի կտրած և նույն չափի ծալված, իրարից ձևով չտարբերվող փոքր թղթեր, որոնցից երկուսի մեջ պետք է գրված լինի «Խորհրդի անդամ» բառերը:

18. Հասարակական կազմակերպության ներկայացուցիչները հանձնաժողովի անդամներից մեկի կողմից թղթերը խառնելուց հետո իրենց ցանկությամբ հերթով մոտենում և դուրս ենք քաշում մեկական թուղթ, որից հետո բացելով թուղթը և բարձրաձայն կարդալով գրառումը (եթե գրառում չկա, բարձրաձայն ասվում է, որ չկա գրառում)՝ այն հանձնում են հանձնաժողովին:

19. Վիճակահանության գործընթացն ավարտվում է բոլոր թղթերի դուրսբերմամբ և թղթերը կարդալուց հետո դրանք հանձնաժողովին հանձնելով:

20. Վիճակահանության գործընթացն ավարտելուց անմիջապես հետո հանձնաժողովն արձանագրում է արդյունքները և այդ մասին տեղեկացնում վիճակահանության մասնակիցներին՝ վերջիններիս հանձնելով կազմված արձանագրությունների օրինակները: Դրանք կազմվում են մասնակիցների թվաքանակով և ստորագրվում են հանձնաժողովի անդամների ու մասնակիցների կողմից: Եթե մասնակիցը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա դրա վերաբերյալ արձանագրության մեջ կատարվում է գրառում:

21. Վիճակահանության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ստորագրման պահից այն հասարակական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչները դուրս են բերել «Խորհրդի անդամ» գրառումը, համարվում են Խորհրդի անդամ:

22. Հանձնաժողովը՝ աշխատակազմի միջոցով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության

տեղադրումը ՀՀ կառավարության աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում:

23. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են երկուսից պակաս հասարակական կազմակերպություններ, ապա հանձնաժողովը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է՝ համաձայն սույն կարգի 2-րդ գլխի դրույթների:

24. Ռոտացիա կիրառելու համար ՀՀ կառավարության աշխատակազմը առաջին երկու կազմակերպությունների ներգրավումից հետո երկու տարի անց հրապարակում է Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման մասին նոր հայտարարություն՝ համաձայն սույն կարգի 2-րդ գլխի դրույթների:

25. Եթե հերթական ներգրավման գործընթացին մասնակցում են սահմանված չափանիշներին համապատասխանող երկուսից ավելի հասարակական կազմակերպություններ (Խորհրդում գործողները նույնպես հայտ են ներկայացնում և մինչև ընդգրկման նոր գործընթացի ավարտը շարունակում են պահպանել Խորհրդում անդամությունը), ապա նրանց ներգրավման հարցը քննարկվում է Խորհրդում: Քննարկման պահին Խորհրդի անդամ հանդիսացող և նոր հատ ներկայացրած հասարակական կազմակերպությունները քննարկմանը չեն մասնակցում: Եթե կազմակերպությունները երեքից ավելի են, ապա այս դեպքում տեղի է ունենում վիճակահանություն՝ համաձայն Կարգով սահմանված ընթացակարգի, որոշելու, թե Խորհրդի որ անդամ կազմակերպությունն է տեղը զիջելու նորին: Տվյալ դեպքում, որպես Խորհրդի անդամ ներգրավվելու առաջնահերթության իրավունք ունի նախկինում Խորհրդի անդամ չհանդիսացող կազմակերպությունը:

Ձև

**Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար-նախարարին**

.....

(Հասարակական կազմակերպության անվանում,

.....

գործունեության և իրավաբանական հասցե, հեռ., էլ-փոստի հասցե)

.....

(պետական ռեգիստրի վկայականի սերիա, համար, երբ և ո՞ւմ կողմից է տրվել)

Հ Ա Յ Տ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի

կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ընդունել այս հայտը

ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում ընդգրկվելու համար:

Կից ներկայացնում եմ պահանջվող հետևյալ փաստաթղթերը.
